

Բառ-նախադասություն տերմինային զույգի բովանդակային հարաբերակցության որոշ խնդիրներ
գրական արաբերենի լեզվական նյութի հիման վրա

Դեռևս միջնադարում մշակված արաբերեն լեզվի նորմավորված եւ հարուստ
ֆերականական ժառանգությունը պայմանավորում է այն հանգամանքը, որ նույնիսկ այժմ էլ
գրական արաբերենի տեսության որոշ դրույթների մշակումը անմիջապես պահանջում է վերադարձ
դեպի միջնադարյան ֆերականական ուսմունքներն ու վերջիններիս ֆննադատական
վերախմաստավորում: Նման սկզբունքը թույլ է տալիս մի կողմից լիարժեքորեն գնահատել
միջնադարյան արաբ ֆերականագետների ձեռքբերումները ու մյուս կողմից՝ խուսափել մի շարք
դրույթների չափազանց արդիականացումից (եթե վերջինս ընդունենք որպես հնդեվրոպական
լեզուների լեզվաբանական համակարգի տվյալներով ձեւավորված տերմինային ապարատի
մեխանիկական կիրառում գրական արաբերենի լեզվական փաստերի նկարագրման նկատմամբ:)

Խոսելով բառ-նախադասություն տերմինային զույգի բովանդակային հարաբերակցության
եւ այդ տերմիններով արտահայտվող լեզվական միավորների համակարգային էության մասին
պետք է նշել, որ հիմնական խնդիրը, որն առաջանում է վերոհիշյալ այս շրջանակներում,
մասնավորապես, արաբերենում ստորոգական տարբեր տիպերի (բայական նախադրությամբ եւ
անվանական նախադրությամբ) կառույցների ֆննարկման ժամանակ, անմիջականորեն կապված
է պրեդիկատի դիրքում (musnaad) սիստեմատիկորեն իրացվող լեզվական միավորի երկակի
բնույթով: Մի կողմից այն իրենից ներկայացնում է բայահիմք (հիմք), որը արաբերենում բայի
իմաստա-ձեւաբանական կառուցվածքում դեմքի ֆերականական կարգի իրացման
բացակայության պայմաններում կարող է միաժամանակ ընկալվել որպես բայական բառաձեւ եւ
մյուս կողմից էլ՝ այսպիսի ցանկացած միավորի իմաստային կառուցվածքը իր մեջ ներառում է եւ
մատնանշում նաեւ սուբյեկտի (musnad ilayhi) կամ «ենթադրելի» (mustatir), կամ «բացահայտ»
(bariz) առկայությունը, որի արդյունքում ստորոգումը տեղի է ունենում հենց այդ բառաձեւի
շրջանակներում եւ վերջինս կարծես թե ընդգրկում է ոչ թե մեկ, այլ միաժամանակ երկու
շարահյուսական դիրքեր՝ ել պրեդիկատի, եւ սուբյեկտի: Այն դեպքում, երբ անվանական
նախադրությամբ նախադասությունները առաջին հայացքից ձեւավորում են ավանդական
սխեմայով՝ «երկու բառաձեւ – շարահյուսական երկու դիրք»: Հենց այս հարթության վրա էլ
առաջանում է «բառ-նախադասություն» հասկացական հակադրությունը: Արդյունքում
առանձնահատուկ կարեւորություն է ձեռք բերում առաջին հերթին «բառ» հասկացության
բովանդակային էության մեկնաբանման, վերջինիս սահմանների տարանջատման համար
անհրաժեշտ որոշակի կոնկրետ չափորոշիչների մշակման, առանձնացման խնդիրը:

Սակայն «բառ» հասկացության սահմանման ընդհանուր բարդությունները եւ վերջինիս
սահմանների անորոշության առկայությունը նաեւ լեզվաբանական ընդհանուր տեսության մեջ,
որոշակի տեսական դժվարություններ է ստեղծում կոնկրետ լեզուներում վերջինիս
տարանջատման համար:

Հատկանշական է, որ արաբական լեզվաբանական ավանդույթում (ԱԼԱ) «բառ» հասկացության արտացոլման համար օգտագործվում են երեք տարբեր «kalima», «lafz» եւ «mufradaat» տերմինները: Վերոհիշյալ այս պայմաններում առանձնահատուկ կարեւորություն է ձեռք բերում այս տերմիններից յուրաքանչյուրով արտահայտված լեզվական հասկացությունների բովանդակային ծավալների եւ համակարգային էության մեկնաբանման խնդիրը:

Այսպիսով, ԱԼԱ-ում «բառ» հասկացությունը արտահայտելու համար օգտագործված վերոհիշյալ երեք «kalima», «lafz» եւ «mufradaat» հասկացություններն էլ այս կամ այն չափով են միայն ծածկում ընդհանրապես «բառ» հասկացության համակարգային էության այս կամ այն կողմը, միաժամանակ բազմաթիվ բարդություններ ստեղծելով վերջիններիս համարժեք մեկնաբանության ժամանակ: ԱԼԱ-ում վերջիններս ծառայում են որպես սոսկ տեխնիկական միջոցներ լեզվական նյութի վերլուծության ընթացքում, որոնցից յուրաքանչյուրը ծառայում է որպես լեզվաբանական վերլուծության այս կամ այն ասպեկտը ծածկելու համար միայն: Դրանք թեւ սկզբունքորեն միեւնոյն հասկացության մասին են խոսում, սակայն դրա տարբեր կողմերն են ներկայացնում: